

ՀՏԴ 82-3(479.243)

Գրականագիտություն

**Վալերի Փիլոյան**  
**Բ.գ.թ., դոցենտ,**  
**Վանաձորի պետական համալսարան**

**ԻՄԱՍՏՈՂ ՀԱՂԹԵԼՆ Է**  
**(Արա Նազարեթյանի պատերազմական պատմվածքները)**

Արցախյան պատերազմի զեղարվեստական տարեկրությունը մինչ օրս հորինումի կարիք չի գտում. այդ տարեկրությունը նախ և առաջ վավերագրական արձակ է՝ կյանքից եկող, կյանքին հավատարիմ և կյանքի չափ անսպասելի ու անկրկնելի: Լյանքից առնված փաստը, դեպքն ու դիպվածը, այս կյանքի դիմագծությունը ներկայացնում են կոնկրետ հեղինակներ, որոնցից է Արա Նազարեթյանը: Նրա պատմվածքների գլխավոր կերպարը ամենատիպիական մարդն է, ով չի ձգտում բարձրագույն հայրենասիրության, չի դրսևորում փառասիրություն: Պատմվածքները հատվածական են, մեկ կամ մի քանի օրվա ժամանակագրություններ: Հեղինակը փորձում է յուրաքանչյուր դեպքում անկրկնելի դարձնել պատումը՝ գտնելով կյանքի նորավեպը, անսպասելի: Լինելով քայտոս՝ պատկերում է ամենատարբեր իրավիճակներ ու բացահայտում պատերազմի դաժան դեմքը:

Բանալի բառեր – վավերագրական-զեղարվեստական արձակ, արցախյան պատերազմ, նովելային պատում, մահկանացուներ:

**Валерий Пилоян**  
**к. ф. н., доцент**  
**Ванадзорский государственный университет**

**СМЫСЛ—ПОБЕДИТЬ**  
**(Военные рассказы Ара Назаретяна)**

Художественная летопись Арцахской войны до сих пор не нуждается в вымысле: эта летопись прежде всего документальная—идущая от жизни, верная жизни и такая же неожиданная и неповторимая, как и сама жизнь. Жизненные коллизии, жизненные факты, эпизоды и события представляют конкретные авторы, среди которых — Ара Назаретян. Главный герой его рассказов—самый обыкновенный человек, который не стремится к высокопарному патриотизму, чужд честолюбивым планам. Рассказы фрагментарны, представляют собой хронику одного или нескольких дней. В любом случае писатель стремится придать повествованию неповторимый колорит, находя новую непредвиденную эпичку жизни. Будучи немногословным, автор описывает самые разные ситуации и выявляет жестокое лицо войны.

Ключевые слова: документально-художественная проза, Арцахская война, новеллистическое повествование, смертные.

**Valery Piloyan**  
**Candidate of Philology, associate professor, VSU, Armenia**

**THE ESSENCE IS TO WIN**  
**(the war stories of Ara Nazaretyan)**

The literary era of Artsakh war needs no invention. This era in itself is a documentary prose which depicts life, is loyal to life and is as unexpected and unique as life itself. The facts, occurrence and event taken from life, the life peculiarity are portrayed by concrete author,s among them Ara Nazaretyan. The main character of his stories is the ordinary person who never strives for pompous patriotism and does not demonstrate vanity. The stories are chronologically disconnected, comprising one or several days. The author tries to make the narration perfect finding the new life manifestation and the unexpected. Being laconic he depicts different situations revealing the cruel nature of war.

Key words: documentary-literary prose, Artsakh war, novelette narration, mortals.

Այս վերջին պատերազմն իր ներկայով ու շարունակական հետևանքներով արդեն բազմիցս դարձել է զեղարվեստական պատկերման նյութ ու առարկա Ռ. Հովսեփյանի, Ջ.Բալայանի, Լ. Խնչյանի, Վ. Վարդումյանի, Հովհ. Երանյանի, Արա Նազարեթյանի, Լ. Ջավախյանի, Վ. Հակոբյանի, Կ. Գաբրիելյանի և այլոց ստեղծագործություններում: «Արցախյան պատերազմ» բառակապակցությունը թեև ճշմարիտ է, սակայն ճշգրիտ չէ, քանզի սա հայոց պատերազմն է, որչի անտեսվելու հայրենիքում և ի սփյուռս աշխարհի ամեն հայի ջանքն ու մասնակցությունը, անգամ ուրագումն ու փախուստը: Արցախյան պատերազմի զեղարվեստական տարեկրությունը մինչ օրս հորինումի կարիք համարյա չի գտում. այդ տարեկրությունը նախ և առաջ վավերագրական արձակ է՝ կյանքից եկող, կյանքին հավատարիմ և կյանքի չափ անսպասելի ու անկրկնելի: Լյանքից առնված փաստը, դեպքն ու դիպվածը, այս կյանքի դիմագծությունը ներկայացնում են կոնկրետ հեղինակներ, մարտիկներ, որ այսօր զենքը փոխարինել են գրչով. չկա միջնորդավորվածություն, կա անմիջականություն, որ այս գործերի ամենամեծ արժանիքն է անգամ երբեմն զեղարվեստական ինչ-ինչ անկատարությունների դեպքում:

Մարդու պատասխանատվությունն ու անպատասխանատվությունը, զոհվելն ու փախուստը, մարդու մղած պատերազմն ու մարդու ապրած ժամանակը ձևավորում են ոչ միայն իր կեցությունը, այլև մարդու և մարդկային հավաքականության պատմությունը: Արդյունքի ու հետևանքի տարբերություն այստեղ էլ է դրսևորվում, քանզի արդյունքը պատերազմն է, հետևանքը՝ մարդու հետագիծը՝ տեսանելի և անտեսանելի: Ի՞նչն է կարևոր՝ մա՞րդը, թե՞ պատմությունը: Չէ՞ որ մարդուց

հետո մի փշուր է մնում կամ չիմնում, իսկ պատմությունը գոնե միլիոնավոր փշուրներից մնացած շերտ է՝ մասնավոր ժամանակով: Պատմության օբյեկտն ու սուբյեկտը, պատմության նյութն ու աղբյուրն ու թե թե փաստն են, այլ անցավոր մարդը, մահկանացուն: Պատահական չէ այս իմաստով Ա. Նազարեթյանի գրքի «Մահկանացուներ» վերնագիրը: Ամենահասարակ մարդիկ, որոնք իրենց ապրածով պատմություն են կերտում, չնայած ամենասովորականներից են: Այս ամենին գումարենք ևս մի իրողություն. տեսակի պաշտպանություն իրականացնում է ոչ թե տեսակը, այլ կոնկրետ մարդը: Այս Մարդն է կարևորվում ու կարևոր է բոլոր տեսակի հարաբերություններում ու գոյակերպի մեջ: Այս մարդուն է դիտարկում Ա. Նազարեթյանն իր պատմվածք-նովելներում՝ չհավակնելով մեծ-մեծ գաղափարների, չպատկերելով ի ծնն հերոսների: Այս ամենասովորական մարդկանց կյանք-ապրածն ասես նրանց նախորդած վարքի շարունակությունն է, նրանց բարոյականության բնական վիճակը:

Եվս մի իրողություն. այս գործերում չկա հերոսի փնտրտուք, հերոսականի պատկերման մոլուցք, չկա պոռտուսություն ու բարձրագույն հայրենասիրություն, կա մարդն ավելի հաճախ իր թերություններով: Հերոսի ու հերոսականի ռեգիստրը, փառքն ու փառասիրությունը («էդ փառք կոչված քաղցրավենիքից մի տակառ ստացել էինք, տղերքը կերան, հատավ») [1, 37]) հեռու են այս մարդկանցից. նրանք ապրում են իրենց դժվար ու ճշմարիտ կյանքը: Այս դեպքում էլ կարելի է հիշել Ժ. Ռասկինի միտքը. «Նրանք՝ ողբերգության կերպարները պետք է ունենան միջին արժանիքներ, այսինքն՝ թուլության ընդունակ առաքինություն»: Եվ ոչ միայն, նաև առաքինության ընդունակ թուլություն: Եթե Ա. Նազարեթյանի Հակոբը («Ընդ») պատմվածքից) առաջիններից է, ապա Իգորյուկ-ռատովցին՝ թվացյալ երկրորդներից, նաև մեր շատ կորուստների մի չնչին մասը փոխառուցողներից՝ որպես ինքնիրեն գտած որդու վերադարձ («Հետախուզում՝ մարտով»):

Նազարեթյանի՝ պատերազմական թեմայով պատմվածքներն ամփոփված են «Մահկանացուներ» [1], «Ռազմավար պատմվածքներ» [2], «Հայկական պատմություններ դուրսիկի համար» [3] ժողովածուներում: Սրանցում տարբեր հաճախականություններ տեղ են գտել պատերազմին ու հետպատերազմյան առանձին դրվագների վերաբերող 26 գործեր, որոնք ասես բեկորներ են պատերազմի հիշողություններից: Կան մեծ ու փոքր բեկորներ, ամբողջական ու թերի, որոնք չեն հասնում ամբողջական պատմվածքի կամ նովելի մակարդակին, սակայն բոլոր դեպքերում գործ ունենք ազնիվ ինքնարտահայտման հետ, որ բացառում է կեղծիքը, սարքովին: Սրանք հատվածական են նաև ժամանակային ընդգրկման տեսակետից: Մեկ դիպված, փոքրիկ գրույց, փոքր պատմություն, որ ժամանակային փոքր տարրություն ունի, սակայն կա ներուժ և իր ասելիքով ամբողջը հաստատելու գործառնություն: Իսկ եթե այս գործերը դիտարկենք որպես ամբողջ իրենց թեմայով, ասելիքով («իմաստը-պիտի հաղթենք»), ուրվագծվող, երբեմն գործից գործ փոխանցվող կերպարներով, ապա կունենանք յուրահատուկ մի վիպակ, որ դեռ գրվում է ու չի ավարտվել, քանի որ տարիների հետ նոր հատվածներ են հայտնվում նրա տարբեր էջերին:

Հեղինակը փորձում է յուրաքանչյուր դեպքում անկրկնելի դարձնել պատումը՝ գտնելով կյանքի նորավեպը, անսպասելի: Ամեն դեպքում յուրովի է կառուցվում գործը՝ հաշվի առնելով կոնկրետ թեմայի «առաջադրանքը»:

«Մահկանացուներ» ժողովածուն բացվում է հեղինակային ծանուցմամբ, որ թանկ է ինչպես ճշմարտությունը բացահայտելու, այնպես էլ ժամանակը ճշգրտելու տեսակետից: Եվ քանի որ այս երկու իրողություններն առիճնում են, և քանի որ կցանկանայի, որ այդ տողերը նաև իմը լինեին, մեջբերում եմ.

«Այս ժողովածուի գրեթե յուրաքանչյուր պատմվածքը կարելի է սկսել՝ ...Դա այն ժամանակն էր, երբ փայտն ու գիրքը վաճառվում էին կշռով և նույն գինն ունեին ու երկուսն էլ վառելու համար էին գնում...» բառերով, բայց եկող սերունդը դրան երբեք չի հավատա, ինչպես մենք չէինք հավատա մի հինգ տարի առաջ. ժամանակի հարահոսում այսքան արագափոխ ու բացառիկ հատված է մեր ապրածը:

Ու տեսնես մարդ-մահկանացուից բացի այս մոլորակի պտտապատճենած օր-միավորների հաշիվն ուրիշ պահող կա՞» [1,3]:

«Գնում էին երկուսով» պատումը պատերազմի մի փոքրիկ դրվագ է, մարդկային մի կորստի արժանագրում, որ միաժամ այդ մարդու ճակատագրի արտահայտություն է: Քիչ անտեղյակ ու անհաղորդ էինք Պապո Ազատի գոյության խորհրդին, բայց մարդու անհետացումից հետո արդեն հաստատագրվում է իր գոյությունը, և ձորը, ուր անհետացավ, սկսում են կոչել իր անունով: Բայց մինչ այդ՝ «Քամին մի բանով է լավ, որ թե հանկարծ մրսում ես, կարող ես ասել քամուց է: Ուժեղ քամի էր » [1, 13]:

«Ավերակ տունը» պատմվածքի թեման թերևս ազատությունն ու պատիժն են: Թշնամական կողմից դիպուկահարը, որ թորք չէ, այլ այլազգի վարձկան, չի սպանում, այլ վիրավորում է. «Չսպանեց, որովհետև ականջների համար, ասում են, դրանց հարյուր դուրս են տալիս, իսկ գերին, կենդանի գերին շատ ավելի թանկ է գնահատվում, դեռ ականջներն էլ վրան» [1, 20]: Սակայն այս դեպքում էլ ազդեցությանը պիտի հետևի հակազդեցությունը. «Ձախ» հիմնական աշխատող ձեռքն աշխատեց ինքնաբերաբար ու ճշգրիտ: Սովորի պես ոտքից գլուխ հանդերձանքով, փշովի-մարդահասակ տիկնիկ հիշեցնող մեկը գարնացած վրացու հանգույն ձեռքերը կողմերի վրա շարտելով, տատանվեց անվճռական՝ փորի վրա ընկնի, թե մեջքի, ապա, ասես փուրքը թողնելով, դանդաղ փլվեցու երբ հերթը հասավ գլխին, շիֆերի դարսը խուլ դիսկաց» [1, 19]:

Սակայն հեղինակը չի բավարարվում այսքանով, քանի որ կա ավերելու մեծ առեղծվածը. «Ընդունվելուց հասավ: Ծունը կտրելով, դեռ տեղ չհասած, կանչեց գառիվերից.

-Բուշլատն իմն ա:  
Ձմեռ էր» [1, 20]:

«Եթե որևէ բան ապացուցման կարիք ունի, ապա դա ոչ թե անմահության, այլ մահվան ֆենոմենն է» [4,130].- ասում է Է. Կասսիրերը: Մահվան կողքին, նրա հետ մերձավորագույն հարևանությանը ապրողները «վճռականորեն ժխտում են մահվան հնարավորություն իսկ» [4, 130]:

Իսկ «Ինչպես հազար տարի առաջ» պատմվածքում դիպուկահար է մոջահեդը: Միքանիօրյա լռիկ մենամարտից հետո վաշտի հրամանատար Օնրոնը վիրավորում, իսկ Ղուկասն էլ ոչնչացնում է այս մոջահեդին. «Հիմա գալու են դիակի հետևից. դրանք մոջահեդներ են, գալու են տանն: Նայե՛ք՝ չլրիպե՛ք: Դրանց միայն վերջին դիակն է մնում անտեր» [1, 26]:

Արա Նազարեթյանի պատերազմական պատմվածքների մեջ մի շարք գործերի հետ առանձնանում է «Հշմարիտ ախպերության կենացը» գործը՝ ավարտուն, ամբողջական, առանց ավելորդ խճողումների, և կարող ենք այն իրավունքով հիտարկել նովելի տիրույթներում:

Պատերազմի չգրված օրենքներով բնական իրողություն «էլլադը»՝ ավարը՝ լինի անասուն, քար ու փայտ, ոսկի ու կահույք, գործն ու քիչ առաջվա բուշխարը...

Գյուղի բարձրադիր կողմի մեծ առանձնատուն են ներխուժել գրահամերկնայի վարորդն ու նշանառուն: «Սալօջախին թնյնիկն իրենուտում էր, <...> սնդանին փլավը պաղել էր: Ունևորտուն էր, քաղաքային բնակարանի կահավորանքով, պատերն ու հատակը գորգապատ» [1, 28-29], սակայն երկուսն էլ նշանառել են հյուրասենյակի կահույքը: Մեկմեկու հանդեպ գերազանցություն ստանալու նպատակադրմամբ հոգեբանական «դիվերսիաների» են դիմում՝ մոտենալով ավալերության գաղափարին ու կենացին: Բայց այդ պահին այդ ավալերություն կոչվածին հակադիր է կահույքը. «Ըս կենացն էսպես չի խմվի... Ես դրա շինողի»:

Ու ավտոմատն առնելով՝ երկար մի կրակահերթ թողեց պատը գրաված եվրոպական կահույքով մեկ:

Լռություն տիրեց, ականջներում գնգացող լռություն: Ապա մեծ պահարանի դռները դանդաղ-ծանր բացվեցին...

Ավտոմատները գրված երեք տղամարդու մարմին գլորվեց հատակի գորգին» [1, 33-34]: Ու հայտնիանում է ամենամեծ ճշմարտությունը. «Ըս կռիվը նախ հաղթել է պետք, ախպերս: Քիչ մնաց առաջ ընկնեինք: Հաղթանակի կենացը» [1, 34]: Սա էլ պատերազմի հազարավոր դեմքերից մեկն է՝ անկանխատեսելի, մեր տեսակն ու մեր դեմի այլատեսակը բացահայտող:

Եթե Լ. Սեչոյանն իր «Սև գիրք, ծանր բզեզ» վեպում իրեն հասուն կ պացիֆիզմով պատկերում է պատերազմի հոտը (ավելի շուտ՝ «հոտը պատերազմն էր» [5, 135]), ապա Արա Նազարեթյանն էլ պատկերում է «Պատերազմի համը»: Ձինվորներից Սեյրանը իր զինակիցների ու թղթակցի համար խորոված է պատրաստում. «Կզնաս քաղաք, կասես կխտարի միս եմ կերել» [1, 57]: «Կրակը թեժ արած, Սեյրանը միսը քաշում էր հոնե ճիպոտների ու հրացանի շամփորների վրա: Փափուկ, յուղոտ ոչխարի նման միս էր, միայն *կտրակներն ավելի կտր էին*» [1, 56]: Վերջին միտքը հանգուցալուծումը հուշող պայման է, որին վերադառնալու ենք քիչ անց (հեղինակն արդեն նովելի համար «թույն է կաթեցրել» կամ ինտրիգ է կառուցել), քանի որ «Պատերազմի համը բերանով չեն առնում, այլ ուղեղով գզում են» [1, 59]: Սյնինչ հանգուցալուծումն արդեն հաստատորեն փաստում է, որ զինվորների կերածը շան մսից «նրբախորտիկ» է, որից հետո ուղեղը լարվածությունից բժժում էր, ասես գլխարկը սնդում էր, իսկ քունքերին մրջյուններ էին վազվզում: «Գլխի մեջ ամայություն էր՝ *անխառն, անելանելի... անն գր ու ՓՄՍՍ*» [1, 61]:

«Ծանր երագ»: Երկն իր պայմանակնություններն ու հանգուցալուծմամբ միայն վերջին մի քանի տողում է վերածվում նովելի, որ բառացիորեն կրկնում է Ծ. Ծահնուրի նախածանցնաձ, բայց չգրած «Որդիք որոտման» վեպի միակ գլուխը՝ «Պոյնուզները» վերնագրված: Սա դաժանության վերջնասահմանն է, ծանր երագ, թերևս ճշտե՞նք՝ մո՞ճավանջ: Թշնամին արել է իրենը. « մի վիրավորի գրպանից նկարաշար դուրս եկավ... Առաջին նկարում ինքն էր՝ անվեներ կտրիճի տեսքով, ոտքը գետնաթափալ մեկի մեջքին: Հաջորդում դարձյալ ինքն էր՝ գոհի կրծքին ծնկած, դանակը բլին: Ծեղրը կիսով չափ մտել էր, մինչդեռ ինքը, դեմքը դարձրել լուսանկարչի կողմը, ժպտում էր ճիգով: Մյուս ձեռքը չոված մատներով ամուր գետնին էր սեղում ու երևի թպրտացող մատաղացուին: Երրորդ նկարում էլ ինքն էր՝ մարմնից անջատված գլուխը ձեռքին: Գլխի մագերը կտրած վզից երկար էին...» [3, 88]: Եվ նրանից հետո չիմնում նաև մեր յուրայինը: Արդյունքում տեսնում ենք պատերազմի անմարդկային դեմքը: «Ըդ դաժանությունը իրենցից սովորեցինք», - ասում է «Գնում էին երկուտով» պատմվածքի կերպարներից մեկը, և պատմվում են դաժան պատմություններ, որոնք, ինչպես ասում են, բացարձակ սարսափի վկայություններ են՝ երկուստեք դաժան, և հաստատում են, որ «հուշը հիշատակով է լինում»:

«Դավաճանություն» և «Հրադադար» պատմվածքները ընդդիմադիր տեսակների տարբերություններն են բացահայտում: Քանի որ « հրադադարի լարված պարապությունը տղերքը դժվար են տանում», լեյտենանտ, նախկին բաքվեցի Ավակիմովը հակառակորդից տանկ է առգրավում, իսկ «Դավաճանություն» պատմվածքում հակառակորդ գորաջոկատները պայմանավորվում են իրար վրա չկրակել, սակայն... «Դավաճանության պես մի բան, իրոք, եղել է: Մինչև գետափ, լանջը, փխր, լրիվ ականապատած է: Նեղ մի արահետ կա, արահետով իջել, թուրքերը դրանց գնալ-գալու ԻԾԱՇԱՐՈՒԿԸ տեսել են, գիշերը նույն ճանապարհով եկել... Բայց հիմա ո՞ւմ պատժես: Իրենք իրենց պատժել են» [3, 75]:

Աստ հիշված Ավակիմովը թերևս «Հարևանները» պատմվածքի Միշա Ավանեսովն է. «Մինչև բաքվեցի փայտատական ինժեներ Միշա Ավանեսովի գալը գումարտակի անձնակազմի ավելի քան քսան տոկոսը, գոհ թե վիրավոր, թշնամու ականանետը շարքից հանել էր առանց կռիվ-ճակատամարտի: Միշա Ավանեսովը եկավ-չեկավ, հակառակորդի ականանետին ինչ-որ բան պատահեց: Դիրքերի վրա այլևս չէր աշխատում, խփածն էլ բարձր էր գնում կամ լցվում էր ձորը» [1, 36]: Պատերազմական դժվար օրերին թշնամական դիրքերը գնալ-գալու իրավունք ունեցող, մեկ ամիս առաջ Բարու գնացած-եկած Ավակիմովը «փախչելու օրը տան բանալին հարևանիս էի տվել՝ ինչ կարող է ծախի, ինչ չէ՝ վերցնի իրեն: Էսքան ժամանակ չէի կարողանում գտնել: Վերջը գտա» [1, 38]:

Երեկվա հարևաններն այսօր «հարևան» են հակառակորդ խրամատներում: «Կեսօրի մոտ Միշա Ավանեսովը ուտելիքի կապոցն առավ, իջավ ձորը: Երեկոյան հետ եկավ քեֆը լավ, աղբբեջանական մուղամը ծուլի պես քթից կախ, կոթ բեղերի վրա փռած: Դժվար թե հարևանը իրենց դիրք վերադառնալիս կոմիտաս երգեր, բայց Միշա Ավանեսովն արդեն գումարտակի թալիսանն էր» [1, 39-40]: Ու այս պատմությունը դառնում է սովորական իրողություն: Ու որ փորձանք չդառնա, ուղարկում են թիկունք, բայց գնալուց առաջ «Միշա Ավանեսովն ասաց.

-Միրտս դնգում ա, մի վատ բան ա լինելու: Քանի էստեղ էի, տղերքն ապահով էին, հիմի չգիտեմ: Երրորդ, հինգերորդ, վեցերորդ դիրքերին ասեք զգույշ կենան» [1, 40]: Տղաները պարզում են, որ »երրորդ, հինգերորդ, վեցերորդ դիրքերի ընդհանուրն այն էր, որ երեքն էլ, տարբեր կողմերից, նայում էին գետի մյուս ափի հանդարտ բլրի վրա ուլի պոզի պես աճած ժայռակտորին» [1, 41], կարգաբերում գնեք, որ ազապներն այդ ժայռի քերծի վրա շուտ-շուտ իջնեն:

Արա Նազարեթյանի «Առաջին բարձունքը» երկը հաստատապես լավագույններից է պատերազմական թեմայով գործերի շարքում: Տեղ է գտնում ոչ միայն կոնկրետ ենթաթեմայի իրացումը. սրանից առաջ հարկ է ընդգծել պատումի անսպասելիությունը, որ իրականացվում է խոսքի խաղային տարրերի կիրառմամբ:

Ձուկապետի «խոսքը խաղում էր, ինչպես ձին հմուտ վարժեցնողի տակ» [2, 18]: Խոսքի խաղը նշանակալի գործառույթ ունի՝ հավաստիացնել նորակոչիկներին, որ նրանք « գնում են թիվ «իքս» բարձունքում տղաներին փոխարինելու, քանի որ վերջիններս ավելի կարևոր առաջադրանք ունեն: Անհրաժեշտ հանձնարարականներից ու պարզաբանումներից հետո էլ »նրա արտիստիկ խոսքը խաղում էր ու փայլատակում, փայլատակում էր ու խաղում» [2, 20]: Այդպես խաղով էլ անփորձ տղաների կողմից գրավվում է թշնամական բարձունքը. «Պիտի ներքը, տղերք, որ նախորդ շասացի՝ հիմա զինվոր դառնալու

ճանապարհի ձեր առաջին բարձունքը նվաճված է, փորձ արդեն ունեք. հետագա գործողությունների համար անցնում եմ բաց տեքստի» [2, 21]: Մամանատիպ իրավիճակի մասին է ասում Յոհան Հայզինգան. «գրական նյութի կենտրոնական թեման մի առաջադրանք է, որը պետք է կատարի հերոսը, մի փորձություն, որին նա պետք է դիմանա, մի խոչընդոտ, որը պետք է հաղթահարի» [6, 191]: Փորձություն-խոչընդոտը հաղթահարված է, այլևս չկա փակ տեքստը: Ծաղրածուի գործառույթ ունեցող ջոկապետը վերադառնում է իր հայրական տնային, դեն նետում դիմակը. «Հերոսը չի ճանաչվում, ինչպես որ է, որովհետև թաքցնում է իր էությունը կամ ինքն այն չի ճանաչում, քանզի կարող է փոխել իր արտաքինը, կերպարանափոխվել: Մի խոսքով՝ հերոսը դիմակ է կրում, գործում է ծպտված, իր մեջ գաղտնիք կրում» [6, 191]: Պատանյակների կոիվ գնալու պայմանաձևը, որ իր ներսում ենթադրում է մանկան արքետիպը, հաստատվում է Նագարեթյանի այս անհավանական նովելում՝ իր հերթին հաստատելով մեր տեսակի գեներտիկ ու միջակայական ընդհանրականությունը:

«Տոթօր» երկը Լ. Խնչոյանի համահունչ պատմվածքի հետ աղերսներ չունի և ոչ կրքի, այլ աշխարհավերման պատմություն է: Սա Ա. Նագարեթյանի պատկերած բացարձակ ողբերգություններից և բացարձակ հաջողություններից մեկն է, որին ուշադիր վերաբերմունք է պետք, ոչ մեկ-երկու նախադասությամբ հպանցիկ անդրադարձ: Սույնը կարող ենք ասել «Պատասխան չի լինելու» նովելի վերաբերմամբ: Այս դեպքում գերակա է ոչ թե ի՞նչ-ը կամ ինչպե՞ս-ը, այլ ինչո՞ւ-ն, որ իր հետևից բերում է պատասխանը: Երիտասարդը տուն չի դառնալու, չի հանդիպելու իրեն սիրահարված աղջնակին, քանի որ «Դեմքի վրա բարձրացված մուգ կանաչ թաշկինակի տակ տափաշշից օդին գուլ-գուլ լցվեց այնտեղ, ուր բերանը պիտիլիններ, բայց բերանի խռոչն էր այնպես բաց-ահարկու. արևի բեկորը ծնոտը տարել էր: Չկար» [2, 86]:

Պատերազմի մի այլ դիմագծություն կա «Լյանքի նովելը» և «Ծաղկամանը» պատմվածքներում, որ ներկայացնում են այդ օրերի թիկունքի կյանքի փոքրիկ դրվագներ: Մասնավորապես «Ծաղկամանը» կյանքն է պատմում՝ նորաստեղծ ընտանիքի գավակի նախածնունդը մանրամասնելով, կնոջ հանդեպ վիրավոր ամուսնու վերաբերմունքով, աղքատությամբ ու սպասմամբ... Հոգեբանական նուրբ դիտարկումները, քչախոսք, սակայն բազմացույց այս պատումն իրոք աշխատված է, գուրգուրված և հեղինակի շնորհի առավատչյան է:

Ա. Նագարեթյանը շատախոս չէ: Իրեն վերադարձնենք իր իսկ նախադասությունը. «Ինքը երկար խոսքը, խոսքի ջուրը չի սիրում» [3, 84]: Եվ հեղինակն իր նպատակն է բերում արցախյան պատերազմի գեղարվեստական վավերագրությամբ: Ավելի հաճախ իրավացիորեն շրջանառվում են Լ. Խնչոյանի անունն ու վաստակը, բայց այս մարտիկ-գրագետը միայնակ չէ. նրա կողքին ու իր հետ ջոկ, դասա՞կ, վա՞շտ, թե՞ գումարտակ է քայլում, ուր հայոց գրի ու գորքի *գինավորներ* կան, և այս շարքում չենք կարող ուրանալ Արա Նագարեթյան նրբանկատ գրագետի անունը և այլոց, որոնց գործին անդրադառնալու պատենությունը մի օր պիտի գտնվի:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նագարեթյան Արա, Մահկանացուներ, Ե., «Նաիրի», 1995,
2. Նագարեթյան Արա, Ռազմավար պատմվածքներ, Ե., «Ապագա», 2001,
3. Նագարեթյան Արա, Հայկական պատմություններ դուդուկի համար, Ե., ՀԳՄ հրատ., 2015,
4. Կասսիրեր Է., Ըստն մարդու մասին, Ե., Ս«արգիս Խաչենց-Փրինթինգ», 2008,
5. Խնչոյան Լևոն, Ձայներ և տեսիլքներ, Ե., «Նաիրի», 2006,
6. Հայզինգա Յոհ., Homo ludens. մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, Ե., «Սարգիս Խաչենց-Փրինթինգ», 2007: